

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ՊԻՈՆԵ՛Ր, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՊԱՅՔԱՐԻՆ ԵՂԻ՛Ր ՊԱՏՐԱՍՏ

# Պիոներ կանչ

ՕՐԳԱՆ ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՒՐԲԱԹ
24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
1982 Թ.

№ 102 (4577)

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
1925 Թ.

ԳԻՆԸ՝ 1 ԿՈՊ.

# ՄԵՐ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԻՔ, ՀԶՕ՛Ր ՀԱՅՐԵՆԻՔ




## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Հայրենիքիս ամեն մի
Լուսաբացի մեջ պայծառ՝
Թաքուն պահված երազ կա՝
Ծաղկունքներով մշտավառ:
Մի իմաստուն խորհուրդ կա՝
Կարոտի մեջ ծովացած,
Թող երազն այդ ծաղկավետ
Դառնա լույսի մի կարկաչ:
Ծաղկահանդես թող դառնա,
Դառնա երազ ու խնդում,
Եվ մեր սիրով մանկանա՝
Հայրենիքիս ջերմ գրկում:

ԳՈՒՐԳԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Լենինական, № 30 դպրոց, 6-րդ դասարան

## Ամենօրյա լուսաբաց

Ես ապրում եմ բերկրանքի լուսաբացում: Ես քայլում եմ դպրոց տանող ճանապարհով: Տուֆակերտ ու գեղեցիկ տներից ուրախ քրքիջով դուրս են վազում երեխաները և երգով լցնում դպրոց տանող ճանապարհը: Լուսաբացը արևվոտ ու բարի ողջունում է նրանց, ուղեկցում դպրոց: Բոլորի աչքերում ժպիտ կա ու բերկրանքի շող: Նրանք ջերմությամբ ողջունում են միմյանց, քայլում միասին:

Տաք օջախից բոլորս գնում ենք մյուս՝ լուսավոր մտքի օջախը, ուր մեզ սպասում են ուսուցիչները: Որքա՜ն բարություն կա նրանց դեմքերին ու անկեղծ, վարդագույն ժպիտ:

Այսպես է բացվում մեր լուսաբացը, հայրենիք...

ՍԻՐԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Մասիսի շրջան, Մարմարաշենի դպրոց



O O

Հայրենիք՝ կարոտ, սեր ու մաքրություն,
Հայրենիք՝ ծնող մեծ ու արարիչ,
Մարդ մայր է կոչում օտար մորն անգամ,
Բայց հայրենիքով չի փոխում ոչինչ:

Ես՝ հոկտեմբերիկ. ու դու՝ պիոներ,
Ես լույս մասնիկը կոմերիտմիության.
Պատվի եմ առնում, կանգնում զորավիգ,
Որ էլ չմթնի քո կանաչ ճամփան:

Ինչպես վեհ կաղնի, պիտի բարձրանաս,
Պիտի տարածես արմատներդ բյուր:
Դեռ պիտի աճես ու հասակ առնես,
Դեռ պիտի փթթես՝ արևով օծուն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Երևան, № 65 դպրոց, 8-րդ դասարան

